ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻԱՄ ՎԱՉԱԳԱՆԻ ՄԵՀՐԱԲՅԱՆ

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ԵՎ ՎԱՂ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Նաիրա Ռաֆիկի Հակոբյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Մելս Պարգևի Մկրտումյան
	հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հրաչյա Ռաֆայելի Հովհաննիսյան
Առաջատար կազմակերպություն՝	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մայիսի 6-ին ժամը 12:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-Ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. ապրիլի 4 -ին

Փիլիսոփայության և հոգեբանություն
064 մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Կ.Ե.Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: «Թրաֆիքինգ» երևույթը (մարդու կողմից մարդու շահագործումը /մ.կ.մ.շ./) վերջին տարիներին բավականին լայն տարածում է ստացել աշխարհում: Դրա առկայությունը և մեծ ծավալները պայմանավորված են աշխարհում առկա ծանր սոցիալ-տնտեսական պայմաններով՝ քաղաքական, սոցիալական վայրիվերումներ, կրթական նորամուծություններ, հասարակության ֆրուստրացված վիճակ, արտագաղթ, սոցիալական տագնապներ և անորոշություն, ցածր կենսամակարդակ, բևեռացված հասարակություն, չնահանջող աղքատություն և հասարակության բնականոն զարգացման ընթացքի խեղաթյուրված պայմաններ, իրավական դաշտի վերակառուցումներ, որոնց պայմաններում մեր հասարակության խոցելի շերտերը /գործազուրկներ, աղքատներ/ դառնում են անպաշտպան:

«Թրաֆիքինգ» երևույթն իբրև հանցատեսակ շատ մեծ հասարակական վտանգ է, որն ունի բարձր լատենտություն: Ինչպես քրեաբաններն են հաստատում, եթե պաշտոնական վիճակագրական տվյալների մեջ ներառված և գրանցված բռնության, շահագործման բազմաթիվ փաստերը ներկայացնենք սառցաբեկորի տեսքով, ապա մենք կստանանք միայն վերջինիս վերին փոքրիկ հատվածը: Չնայած խնդրի արդիականությանը, այնուամենայնիվ, այն բավարար չափով ուսումնասիրված չէ հոգեբանության բնագավառում: Առկա են հիմնախնդրի վերաբերյալ հետազոտություններ տարբեր բնագավառներում, սակայն առ այսօր չկա որևէ գիտական կամ մենագրական աշխատանք, որը կվերլուծեր թրաֆիքինգի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ուսումնասիրված չէ, թե ի՞նչ պատճառներ են ընկած զոհի և շահագործողի վարքի հիմքում, ի՞նչպիսի հոգեբանական մեխանիզմներով է տեղի ունենում զոհի ընտրությունը, ի՞նչպիսի հոգեբանական ուղիներով կարելի է կազմակերպել երևույթի վաղ կանխարգելումը և զոհի առաջնային հոգեվերականգնողական աշխատանքը: Իսկ այն, որ թրաֆիքինգի կանխարգելման և հաղթահարման համար պետք է ուսումնասիրել վերոհիշյալ առանձնահատկությունները, վկայում են ինչպես միջազգային վիճակագրական տվյալները, այնպես էլ մեր դիտումները, հետազոտության արդյունքները:

Աշխատանքում կարևորվում է թրաֆիքինգի սոցիալ-հոգեբանական պատճառահետևանքային կապերի բացահայտումը և երևույթի բազմահայեցակետային դիտարկումը, հոգեբանական հետազոտումն ու նկարագրումը, քանի որ թրաֆիքինգի պատճառների բացահայտումը և մանրակրկիտ հոգեբանական հետազոտումն ու վերլուծությունը թերի է (ինչպես արդեն նշել ենք, թրաֆիքինգի սոցիալ-հոգեբանական պատճառները գիտական ուսումնասիրության առարկա չի դարձել):

Թրաֆիքինգը հասարակական ախտ է, որը սպառնում է հասարակության ներդաշնակ զարգացմանը, ազգի բարոյա-հոգեբանական կերպարին, ազգային գենոֆոնդին՝ մասնավորապես վերարտադրողականությանը և հոգեկան առողջությանը, անձի հետագա կյանքին և գործունեությանը:

Հիմնախնդրի արդիականության և հրատապության հրամայականով է պայմանավորված ատենախոսության թեմայի ընտրության և կատարած հետազոտության շրջանակներում հիմնախնդրի հոգեբանական պատճառահետևանքային կապերի բացահայտումը, երևույթի հոգեբանական առանձնահատկությունների վերհանումն ու բազմահայեցակետ վերլուծությունը, նախականխման ուղիների որոնումը:

Հետազոտության **նպատակն** է՝ ուսումնասիրել «թրաֆիքինգ» երևույթի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններն ու պատճառահետևանքային կապերը, նախանշել վաղ կանխարգելման ուղիները:

Հետազոտության հիմքում ընկած է գիտական այն **վարկածը**, համաձայն որի.

Թրաֆիքինգը սոցիալ-հոգեբանական եռափուլ շարժընթացով, հորիզոնական և ուղղահայաց բրգաձև ստորակարգությամբ, դերադիրքային, վարքային ասոցիալ դրսևորումներով ուղեկցվող գործընթաց է, որում մասնակցության վճռորոշ գործոններն են՝ անձնային յուրօրինակ հոգեբանական առանձնահատկությունների համախումբն ու վիկտիմոլոգիական տիպաբանությունը:

Նպատակի իրականացումը պայմանավորված է կոնկրետ **խնդիրների** լուծմամբ.

-Բազմահայեցակարգային վերլուծության ենթարկել «թրաֆիքինգ» երևույթը:

-Ինտեգրել տարբեր գիտակարգերում առկա ուսումնասիրություններն ու մոտեցումները, հիմնախնդիրը դիտարկել սոցիալ-հոգեբանական համատեքստում:

-Ուսումնասիրել և ներկայացնել թրաֆիքինգի զոհ դարձած մարդկանց դեպքերը և դրանք ենթարկել հոգեբանական վերլուծության:

-Ուսումնասիրել շահագործման զոհ դարձած մարդկանց և շահագործողի հետ նրանց ունեցած սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունների շարժընթացը:

-Բացահայտել, դասակարգել և բնութագրել թրաֆիքինգի առաջացման վիկտիմոլոգիական պատճառները:

-Ուսումնասիրել թրաֆիքինգի երկկողմանի գործընթացում ներգրավվածների անձնային առանձնահատկություններն ու դերադիրքային վարքը:

-Ուսումնասիրել գործընթացի սոցիալ-հոգեբանական փուլային ստորակարգությունը:

-Մշակել հոգեբանական հանձնարարականներ թրաֆիքինգի վաղ նախականխման և հաղթահարման ուղղությամբ:

Հետազոտության **օբյեկտն** է «թրաֆիքինգ» երևույթի սոցիալ-հոգեբանական դրսևորման օրինաչափությունները զոհ դարձած մարդկանց և շահագործողի դերադիրքային փոխհարաբերություններում:

Հետազոտության **առարկան** է թրաֆիքինգի առաջացման պատճառահետևանքային կապերի բացահայտումը շահագործման ենթարկված մարդկանց և շահագործողների դերադիրքային փոխհարաբերություններում:

Հետազոտության ընտրակազմը: Հետազոտության մեջ ընդգրկվել են 58 անձինք, ովքեր իրենց պատիժն էին կրում Աբովյանի ՔԿՀ-ում /իդենտիֆիկացված որպես թրաֆիքյորներ/ և 187 անձինք, ովքեր ազգային ուղղորդման կարգով գտնվում էին տարբեր ՀԿ-ների ապաստարաններում:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են ծառայել անձի և սոցիալական հոգեբանության հետևյալ տեսությունները. Ա. Բանդուրայի սոցիալական ուսուցման, Ձ. Բոուլբիի կապվածության, վիկտիմոլոգիական, ֆեմինիստական, բռնության պատճառականության վերաբերյալ Ս. Մամոնտովայի, Մ. Ամիրի, Յու. Անտոնյանի, Ն. Հակոբյանի «Փոխակերպվող հասարակությունում մարգինալ անձի կարգավիճակը», Մ. Մկրտումյանի «Արտակարգ իրավիճակներում անձի ձևավորման խնդիրը», Ս. Խուդոյանի «Անձի տարիքային ճգնաժամերը», Ս. Գևորգյանի «Դժվար կոնֆլիկտային իրավիճակները>> տեսությունները:

Հետազոտության մեթոդները և դրանց ընտրության հիմնավորումը:

Օգտագործված մեթոդների ընտրությունը պայմանավորվել է աշխատանքի մեթոդաբանական հիմքերով և հետազոտության առարկայով: Մեթոդներն ընտրելիս հաշվի են առնվել մեթոդների համարժեքությունը հետազոտության խնդիրներին, ուսումնասիրության տրամաբանական կառուցվածքին: Հետազոտության հիմնական նպատակը և խնդիրներն իրականացնելու համար կիրառվել են հոգեբանության հետևյալ մեթոդները. դիտում, հոգեբանական զրույց, անկախ բնութագրերի ընդհանրացման, անձնական գործերի վերլուծության, թեսթերից՝ Անձի ուսումնասիրության բազմագործոն հարցարանը /MMPI/, Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Իմ ընտանիքը, «Ինքնանկար», Օ. Անդրոնիկովայի «Վիկտիմ վարքի հանդեպ հակվածության ախտորոշման» մեթոդիկաները: Մեր կողմից մշակվել և իրավապահ մարմիններին է հանձնվել «Թրաֆիքինգի հանդեպ հակվածության ախտորոշման» թեսթ-հարցարան:

Հետազոտության գիտական նորույթն է այն է, որ սոցիալական հոգեբանության բնագավառում առաջին անգամ փորձարարական ճանապարհով հետազոտության առարկա է դարձել վիկտիմ վարքի ձևավորման պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությունը,

թրաֆիքինգի ծագման, զարգացման ընթացքի և բոլոր կողմերի վարքագծային դրսևորումների հոգեբանական օրինաչափությունները: Փորձարարական ճանապարհով ուսումնասիրության են ենթարկվել թրաֆիքինգի զոհերի վիկտիմ վարքի ձևավորման հնարավոր պատճառները, ինչը հնարավորություն է ընձեռում մշակել և իրականացնել արդյունավետ սոցիալ-հոգեբանական կանխարգելիչ միջոցառումներ: Արդյունքում հետազոտության հիման վրա բացահայտել և ներկայացրել ենք նորովի սոցիալ-հոգեբանական մոտեցում թրաֆիքինգի ամբողջական դինամիկ շարժման, գործողությունների ուղղվածության, մասնակիցների անձնային առանձնահատկությունների և վիկտիմոլոգիական տիպաբանության մասին: Ստացված նոր գիտելիքները հնարավորություն են տալիս նաև հասկանալ, թե ինչն է դրդել զոհին հայտնվել այդ դերում, ինչն է ազդել զոհի հոգեկանի, վարքի, ինքնագիտակցության և ինքնագնահատականի, շրջապատի հետ ունեցած նրանց փոխհարաբերությունների վրա:

Հետազոտության տեսական նշանակությունը: «Թրաֆիքինգ» երևույթի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունները նոր հայեցակարգային նշանակություն ունեն սոցիալական հոգեբանության ոլորտում: Թեպետ «թրաֆիքինգ» երևույթը միշտ էլ առկա է եղել, այնուամենայնիվ, հոգեբանության բնագավառում այն գիտական ուսումնասիրության առարկա չի դարձել: «Թրաֆիքինգ» երևույթի առկա ուսումնասիրությունները չեն կարող լուծել հետևյալ հիմնախնդիրները, թե ի՞նչպիսի օրինաչափություններ են ընկած զոհի վարքագծի հիմքում, ի՞նչպիսի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով է պայմանավորված շահագործողների համապատասխան վարքը, և, բնականաբար, մշակված չեն նաև համապատասխան հոգեկարգավորող, հոգեշտկող և կանխարգելող միջոցառումները: Կատարված ուսումնասիրության տեսական նշանակությունն այն է, որ բացահայտված հոգեբանական օրինաչափությունները և հատկանշական առանձնահատկությունները հարստացնում են թրաֆիքինգի երևույթի մասին գիտական պատկերացումները, ինչպես նաև հիմնավորում տվյալ հիմնահարցի հետագա բազմակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Կատարված հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս հասարակության ներդաշնակ զարգացմամբ շահագրգիռ մասնագետներին ցուցաբերել արհեստավարժ մոտեցում թրաֆիքինգի և նմանատիպ այլ հակահասարակական երևույթներից ձերբազատման և նախականխման համար: Թրաֆիքինգի առաջացման պատճառների բացահայտված հոգեբանական օրինաչափությունները և հատկանշական առանձնահատկությունները հնարավորություն են տալիս զինել իրավապահ մարմիններին, տարբեր հաստատություններում, մասնավորապես՝ ՔԿՀ-ներում, աշխատող հոգեբաններին համապատասխան հոգեբանական գիտելիքներով, ինչպես թրաֆիքինգ

երևույթը ծնող պատճառների, զարգացման ընթացքի, օրինաչափությունների մասին, այնպես էլ նախազգուշացնել և հաղթահարել նրա նեգատիվ և հիվանդագին դրսևորումները, կանխարգելել և շտկել շատ բացասական որակներ, որոնք առկա են թրաֆիքինգի կողմերի մոտ: Այսպես, թրաֆիքինգի առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ (անձնային) պատճառների բացահայտումը, տեսական ընդհանրացումների իմաստավորումը կաջակցի իրավապահ մարմիններին, հոգեբաններին, մանկավարժներին կիրառել այնպիսի հնարներ և մեթոդներ, որոնք կկասեցնեն «թրաֆիքինգի» մեջ ընդգրկվելու գործընթացը: Հետազոտության արդյունքներն օգտակար կլինեն նաև երիտասարդներին՝ շահագործումից խուսափելու համար:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. «Թրաֆիքինգ»-ը (մ.կ.մ.շ.) բռնության գործընթաց է՝ զուգորդվող մարդու կողմից մարդու շահագործմամբ, շահագործողի և շահագործվողի գործառութային դերերով և համապատասխան դերադիրքային, վարքային մոդելներով:
2. «Թրաֆիքինգ» երևույթի հիմքը բրգաձև, հորիզոնական և ուղղահայաց շարժունությամբ ասոցիալ վարքային դրսևորումներն են՝ վիկտիմոլոգիական տիպաբանությամբ:
3. Անձնային աքցենտուացված առանձնահատուկ գծերը /գերակտիվ, հուզական, տագնապային, ցուցադրական, գրգռվող/ նպաստում են վիկտիմ վարքի ձևավորմանը՝ տրանսֆորմացվելով թրաֆիքինգի հանդեպ հակվածության:
4. Թրաֆիքինգի գործընթացի հոլովույթում գործարկվում է «նույնականացում» պաշտպանական մեխանիզմը, ագրեսորի հետ նույնականացման շղթայական շարժընթացով:
5. Վիկտիմ վարք-թրաֆիքինգի հանդեպ հակվածություն տրանսֆորմացիոն շարժընթացը մեկնարկում է վաղ մանկության տարիքից՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո համապատասխան միջավայրի առկայության պայմաններում:
6. Վիկտիմ վարք-թրաֆիքինգի հանդեպ հակվածություն տրանսֆորմացիոն շարժընթացը տարիքային տարբեր ճգնաժամային փուլերում դրսևորվում է որակական նոր հատկանիշներով՝ հիմքում ունենալով դեզադապտացիան, օտարվածությունը, մերժվածությունը, հուզական աղքատությունը:
7. Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, թրաֆիքինգի համար նպաստավոր պայմանները առաջ են բերում «կրկնվող թրաֆիքինգ» երևույթը՝ ռեվիկտիմիզացիայի տեսքով, որի հիմքում ընկած են հասարակության մեջ ներգրավվածության բարդությունները, շփման և հաղորդակցման խանգարումները, անձի երկփեղկվածությունը, օտարվածությունը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը: Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնում, հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայում, տարբեր հասարակական կազմակերպություններում, Աբովյանի քրեակատարողական հիմնարկի աշխատակազմում, ՀՀ ոստիկանության Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնում, Վորլդ վիժն Հայաստան միջազգային կազմակերպությունում: Կազմակերպվել են մամլո ասուլիսներ /Արմատ ակումբ, Երևան, 2011-2013/, որտեղ լուսաբանվել է թրաֆիքինգի վտանգավորության աստիճանի, հետևանքների, ռիսկային խմբերի, հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Հետազոտության հավաստիության և հուսալիության մասին է խոսում ուսումնասիրված անձանց քանակը, տվյալների որակական և քանակական վերլուծությունը, մեթոդիկաների քանակը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, հավելվածներից, գրականության ցանկից: Հիմնական նյութում ներկայացված են 10 գծապատկերներ, 15 աղյուսակներ: Ատենախոսությունը շարադրված է 164 տպագիր էջերի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի հրատապությունը, ներկայացված են նրա մշակվածության աստիճանը, նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակից բխող հետազոտական խնդիրները, վարկածը: Ներկայացված է հետազոտության մեթոդաբանական հիմքերը, կիրառված մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության իրականացման փուլերը, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Աշխատանքի առաջին՝ **«Թրաֆիքինգ: Սոցիալ-հոգեբանական մոտեցում մարդու կողմից մարդու շահագործման հիմնախնդրին»** գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Թրաֆիքինգի հիմնախնդրի ուսումնասիրության պատմական ակնարկ»**, քննարկվում են «թրաֆիքինգ» երևույթի վերլուծության պատմական ակնարկը: Պատմությունը վկայում է, որ «թրաֆիքինգ» երևույթը /մ.կ.մ.շ./ հայ իրականության մեջ նորություն չէ և գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից: Այն մեզանում ունի բավականին խորը պատմական արմատներ: Հին մտածողները, սկսած Արիստոտելից ստրուկներին ներկայացնում էին որպես հասարակության առանձին, ցածր շերտ:

Մարդկանց մեծ մասն այդ շրջանում ընկնում էր ստրկության մեջ պատերազմից հետո գերի մնալու պատճառով կամ վաճառվում էր որպես ստրուկ: Մեզ հայտնի է Մխիթար Գոշի «Դատաստանագիրք» աշխատությունը, որտեղ խոսվում է կնոջ առուվաճառքի մասին, Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական» աշխատանքը, որի ուսումնասիրությունից հետո անհերքելի է դառնում այն փաստը, որ թրաֆիքինգի բոլոր տեսակների առաջնային պատճառներից է հանդիսանում աղքատությունը: Անհերքելի ճշմարտություն է նաև այն փաստը, որ թրաֆիքինգի ակունքները գալիս են վաղ ժամանակներից, նույնիսկ մեխանիզմը ձևափոխության չի ենթարկվել՝ զոհ-շահագործող, աղքատության ֆոն, ստրկամիտություն, ստրկավաճառություն:

Երկրորդ՝ **«Թրաֆիքինգ երևույթի միջբնագավառային բազմամակարդակ դիտարկում»** ենթագլխում մանրամասն վերլուծվում և մեկնաբանվում են սոցիոլոգներ Ե. Վ. Տյուրոկոնովայի, Մ. Մ. Մալիշևայի, քրեական իրավունքի, քրեաբանության ոլորտից՝ Ս. Ե. Մետելյովի, Ն. Ա. Գուտորովայի, Ֆ. Լ. Սինցինայի, Տ. Ա. Դենիսովայի, Ե. Վ. Եվստիֆեևայի, Լ. Դ. Երոխինայի, Վ. Ս. Սվիրիդովայի, Մ. Պ. Կլեյմենոյի, Դոնա Հյուզիի, Սալի Ստոքերի , Սթիվեն Գալսթերի, Լուիզ Շելիի տեսությունները:

Քրեաբանության մեջ (Մ. Յու. Բուրյակ, Լ. Դ. Երոխինա և այլոք) կան մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են մարդկանց առուվաճառքի դեմ պայքարի խնդրին: Հեղինակները նշում են, որ կազմակերպված մարմնավաճառությունը շահագործման նպատակով կանանց առուվաճառքի տնտեսական և կառուցվածքային հիմնավորումն է: Մարմնավաճառության աճը, երկրի տնտեսության մեջ նրա ընդգրկվածությունը, կապը կազմակերպված հանցավորության միջազգային ցանցի հետ հասարակական ցածր բարոյականության հետևանք է:

Պետք է հատուկ կերպով ընդգծել, որ թրաֆիքինգի կողմերի մոտ շեշտված են օտարացումը և դեզադապտացիան: Այս երկու բաղադրիչների վերլուծությանը մենք հանդիպեցինք Յու. Անտոնյանի, Մ. Ենիկեևի, Վ. Էմինովի աշխատանքում: Երկու ֆենոմեններն էլ դժվարեցնում են մարդու հարմարումը միջավայրին, ուստի մարդը չի կարողանում կամ չի ցանկանում յուրացնել խմբային ընդունված նորմերը և դերերը:

Ժամանակակից սոցիալ-հոգեբանական տեսությունների շարքում արժեքավոր նշանակություն ունեն Ն. Հակոբյանի, Մ. Մկրտումյանի, Ս. Գևորգյանի, Ս. Խուդոյանի տեսական մոտեցումները հասարակության մեջ տարբեր սոցիալ-հոգեբանական երևույթների հանդեպ:

«Թրաֆիքինգ» երևույթի բազմակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ երևույթի մեջ ներգրավված հանզակազմն անցել են իրենց քրեականացումը որոշակի հանգամանքներում, ձեռք են բերել ոչ համարժեք ընկալումներ դեռևս մանկության տարիներից:

Երրորդ՝ **«Թրաֆիքինգի վիկտիմոլոգիական ասպեկտը»** ենթագլխում ներկայացվում է զոհի հոգեբանությունը, այսինքն երևույթի վիկտիմոլոգիական կողմը:

Ըստ Գ. Հենտինգի, Գ. Էլենբերգերի, Գ. Շուլցի վիկտիմոլոգիական վերլուծությունը արդյունավետ է այն հանցագործություններում, որտեղ հանցագործը անմիջականորեն փոխազդում է զոհի հետ: Նման հանցարարքների շարքին են դասվում, առաջին հերթին, բռնարարքային և շահադիտական-բռնարարքային ոտնձգությունները, ինչպես նաև մեքենայությունների որոշ տեսակներ:

Շատ հանցագործություններ, այդ թվում թրաֆիքինգը, որպես կանոն, կատարվում են զոհի վիկտիմ վարքի հետևանքով. հոգեբանական և ֆիզիկական վիճակի ոչ ադեկվատ գործողություններից ելնելով, իր և այլ անձանց նկատմամբ թեթևամիտ և անզգույշ վերաբերմունքի, անօրինական գործարքների մեջ մտնելու, անմտածված վերաբերմունք ցուցաբերելու պատճառով:

Չորրորդ ենթագլուխ՝ «**Թրաֆիքինգ» երևույթի նկատմամբ սոցիալ-հոգեբանական մոտեցում»** վերտառությամբ, նկարագրվում է «թրաֆիքինգ երևույթը» որպես կազմակերպված հանցավորության տեսակ, որն ունի ինքնակարգավորման բարձր մակարդակ և հիերարխիկ կառուցվածք: Մեծամասամբ այն բրգաձև է, որի գլխին կանգնած է լիդերը, իսկ նրա անմիջական շրջապատում են ոչ մեծ քանակությամբ մարդիկ, որոնք կարող է ընդունել հիմնական որոշումները: Այդ խմբերում յուրաքանչյուրն ունի իր դերը, վարքի նորմերը, ընդ որում դրանցից շեղվելու դեպքում գործում են պատժիչ սանկցիաներ:

Այսպես, թրաֆիքինգը սոցիալ-հոգեբանական եռափուլ շարժընթացով, հորիզոնական և ուղղահայաց բրգաձև ստորակարգությամբ, դերադիրքային, վարքային ասոցիալ դրսևորումներով ուղեկցվող գործընթաց է:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Թրաֆիքինգի սոցիալ-հոգեբանական պատճառների փորձարարական հետազոտություն»**-ը բաղկացած է 3 ենթագլուխներից:

Առաջին **«Հետազոտության կազմակերպումը և օգտագործված մեթոդները»** վերտառությամբ ենթագլխում նկարագրված են մեթոդիկաները, հիմնավորված են ընտրված մեթոդների և մեթոդիկաների ընտրության սկզբունքները, որոնք պահպանել ենք ողջ հետազոտության ընթացքում:

Հետազոտության համար ընտրված թեսթային մարտկոցը նախատեսվել է կին-դատապարտյալների և սեռադերային տարբեր ներկայացուցիչները զոհերի համար: Բոլոր փորձարկվողների հետ աշխատանքն իրականացվել է նույն մեթոդներով և մեթոդիկաներով, ինչը հնարավորություն է տվել տարբեր մակարդակներում միմյանց հետ համեմատել նույնատիպ տվյալներ:

Հետազոտությունը կազմակերպվել է 4 խմբերում.

1-ին խմբում ուսումնասիրվել են շահագործված կանայք

2-րդ խմբում ուսումնասիրվել են շահագործված տղամարդիկ

3-րդ խմբում ուսումնասիրվել են շահագործված երեխաները

4-րդ խմբում թրաֆիքյորները /կազմակերպիչները կամ շահագործողները/

Թեսթերի մեթոդից կիրառվել է «Ինքնանկար» մեթոդիկան, որի նպատակն է պարզել անձի պատկերացումները իր անձի, «Ես»-ի մասին, նրա հուզական վիճակները և ընկալման առանձնահատկությունները, քանի որ անձի վիկտիմ վարքի առաջացման և հետագա խորացման պատճառ կարող է լինել նաև սեփական անձի մասին թերարժեք պատկերացումները, թյուր ընկալումները, նաև ֆիզիկական արատները□ Ինքնանկար մեթոդը կիրառվել է հետազոտական բոլոր խմբերում□

Օ. Անդրոնիկովայի վիկտիմ վարքի հանդեպ հակվածության ախտորոշման մեթոդիկան՝ կապված այն հանգամանքի հետ, որ մենք ուսումնասիրում ենք թրաֆիքինգի սոցիալ-հոգեբանական պատճառները, ենթադրում է նաև վիկտիմ վարքի գենեզիսի ախտորոշում, այդ նպատակով մենք տեղայնացրեցինք հիշյալ մեթոդիկան, որն ուղղված է անձի սոցիալական դիրքորոշումների բացահայտմանը□ Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Իմ ընտանիքը» մեթոդիկայով բացահայտել ենք հատկապես զոհի միջանձնային հարաբերություններն ընտանիքում, քանի որ թեստը պրոյեկտիվ է և արտացոլում է զոհի ենթագիտակցական վերաբերմունքն ընտանիքի և նրա անդամների նկատմամբ□

Առաջին խմբի հետ աշխատանքներից հետո անհրաժեշտություն առաջացավ կիրառել այնպիսի մի մեթոդիկա, որը թույլ կտար դուրս բերել կանանց և տղամարդկանց թրաֆիքինգի հանդեպ նախնական հակվածությունը□Այդ նպատակով մեր կողմից մշակվել է «Թրաֆիքինգի հանդեպ հակվածության ախտորոշման» թեսթ-հարցարանը, որը հնարավորություն է տալիս ախտորոշել մարդու կողմից մարդու շահագործման հանդեպ հակվածության մակարդակները /բարձր, միջին, ցածր/□

Երրորդ խմբում ուսումնասիրվել է թրաֆիքյորների օղակը, այսինքն թրաֆիքինգի մյուս կողմը, ինչի համար ընտրվել էին 131-րդ, 132-րդ, 261-րդ հոդվածներով դատապարտված կանայք□ Նրանց անձի քրեականացումը և թրաֆիքինգի մեջ ընդգրկվելու դրդապատճառները պարզելու համար կիրառվել է նաև «Անձի ուսումնասիրության բազմագործոն մեթոդիկան», որը հանրահայտ MMPI մեթոդիկայի ձևափոխված տարբերակն է և պարունակում է 398 հարցապնդում□ Այն հնարավորություն է տալիս ստանալ անձի հոգեբանական դիմանկարը հիմնական սանդղակների հիման վրա□

Երկրորդ **«Հետազոտության արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծությունը»** ենթագլխում հետազոտության արդյունքներն ու հոգեբանական վերլուծությունը կներկայացնենք նույնպիսի հաջորդականությամբ□

Առաջին խմբում ուսումնասիրված շահագործման զոհ դարձած 55 կանանց, իսկ երկրորդ խմբում ուսումնասիրված շահագործման զոհ դարձած 65 տղամարդկանց անկետավորման մեթոդի տվյալներով հնարավոր եղավ դուրս բերել զոհերի սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական մի շարք առանձնահատկությունները□ Տղամարդկանց և կանանց տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք անձնային որակների առումով ունեն չնչին տարբերություններ՝ կապված թրաֆիքինգի կոնտեքստի հետ□ Կին զոհերի անձնային որակների մեջ գերակշռում են բարձր վստահությունը մարդկանց հանդեպ, նոր տպավորություններ ձեռք բերելու ձգտումը, ինքնահաստատման որոնումները, բարձր ինքնաքննադատությունը, տագնապայնությունը, հուզական անկայունությունը, դեպրեսիվությունը□ Տղամարդկանց շրջանում բավականին բարձր էր վստահությունը կազմակերպիչների հանդեպ, որը ևս զուգակցվում էր ինքնահաստատման որոնումներով և հուզական անկայունությամբ□ Այս որակները հաստատվել են նաև «Մեծ հնգյակ» մեթոդիկայի օգնությամբ□

Օ. Անդրոնիկովայի «Վիկտիմ վարքի հանդեպ հակվածության ախտորոշման» մեթոդիկայով հետազոտությունը մեզ հնարավորություն տվեց առանձնացնել զոհերին ըստ իրենց վիկտիմության աստիճանի և տեսակի, որն էլ իր հերթին հնարավորություն է տալիս կազմել թրաֆիքինգի զոհերի հոգեբանական բնութագիրը:

Գծապատկեր 1. Օ. Անդրոնիկովայի «Վիկտիմ վարքի հանդեպ հակվածության ախտորոշման» մեթոդիկայի միջինացված տվյալներ



Գծապատկեր 1-ում վառ արտահայտվեց այն օրինաչափությունը, որ թրաֆիքինգի զոհերի մոտ նորմայից բարձր են գտնվում ինքնակործանիչ, գերակտիվ, անքննադատ վիկտիմ վարք ունեցող կանայք և տղամարդիկ: «Իմ ընտանիքը» պրոյեկտիվ մեթոդիկան, որի արդյունքների համաձայն զոհերի մեծ մասը մեծացել էր անբարենպաստ ընտանեկան միջավայրում (97%), ենթարկվել էին հոգեբանական և ֆիզիկական բռնության (74,1%), որը վառ արտահայտվում էր նրանց նկարներում: Թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց ընտանիքի նկարներում ծայրահեղ ընտրված գույներով միանշանակ ակնառու էր այն փաստը, որ հենց հասունացման շրջանում

մերժում էր տեղի ունեցել ընտանիքի կողմից (61,6%): «Ինքնանկար» մեթոդիկայի արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ թրաֆիքինգի մեջ ընդգրկված զոհ կանանց և տղամարդկանց մեծամասնությունն ունեն բացասական հուզական երանգավորում (69,6%), անվստահություն (52,6%), ես-ի ցուցադրում (67,7%), դեպրեսիվություն (57,1%), չափազանց մեծ լարվածություն (75,3%), մեղքի զգացում (45,6%):

Գծապատկեր 2-ում և 3-ում ներկայացված են մեր կողմից մշակված «Թրաֆիքինգի հանդեպ հակվածություն» թեսթ-հարցարանի ամփոփ արդյունքները գրաֆիկական արդյունքները գրաֆիկական տեսքով:

Գծապատկեր 2.



Գծապատկեր 3.



Ինչպես երևում է տվյալների գրաֆիկական պատկերից զոհերի մոտ /գծապատկեր 2/ բավականին բարձր է թրաֆիքինգի հանդեպ հակվածության մակարդակը: 110 ընդհանուր թվով հետազոտված կանանց և տղամարդկանց 98%-ի մոտ բարձր ցուցանիշներ են ստացվել բոլոր սանդղակների հետ կապված: Դեռահասների տվյալների գրաֆիկական պատկերից /գծապատկեր 3/ պարզ երևում է, որ նրանց մոտ բարձր և առաջատար սանդղակ է դեպրեսիվությունը, կյանքի իմաստի կորուստը, սոցիալական հարաբերություններում զոհի դերի ընդունումը: Այս ամենը միանշանակ պայմանավորված է անբարենպաստ ընտանիքի առկայությամբ, շատ վաղ թափառաշրջիկությամբ զբաղվելով: Հետազոտված առաջին խմբերի մոտ բարձր էին թրաֆիքինգի հանդեպ հակվածության բոլոր սանդղակները, իսկ դա նշանակում է դժվար իրավիճակում հենարան գտնելու անկարողություն, ագրեսորին արդարացում, մեղքի և անպետքության զգացում, զոհի դերի ընդունում, բարձր դեպրեսիվություն, մինչդեռ դեռահասության տարիքում արդեն շահագործված երեխաների մոտ առաջատար գագաթ էր դեպրեսիվությունը և սոցիալակլսն հարաբերություններում իրեն զոհ ընկալելը□ Ուսումնասիրելով թրաֆիքինգի զոհ դարձած կանանց և տղամարդկանց, թրաֆիքյորներին, նրանց անամնեստիկ և կենսագրական տվյալները, մենք նկատեցինք մի օրինաչափություն, որ նրանց մեծամասնությունը մանկության տարիներին լուրջ տրավմայի է ենթարկվել□ Շատ դեպքերում թրաֆիքինգի զոհ դարձած կինը կամ տղամարդը դարձել էր թրաֆիքյոր՝ ներգրավվելով գործընթացի մեջ: Սա

դրդեց մեզ ուսումնասիրել նաև այն հոգեբանական մեխանիզմները, որոնք ընկած են երևույթի հիմքում□ Հենց այդ նպատակով էլ որոշեցինք ուսումնասիրության ենթարկել 10,11-15,16 տարեկան 67 դեռահասների թրաֆիքինգի հանդեպ հակվածությունը, որը հնարավորինս կնպաստի նաև երևույթի կանխմանը: Մեծ հնգյակի արդյունքները դեռահասների մոտ վկայում են, որ կոնկրետ ընտրված երեխաների մոտ նկատելի է ցածր ինքնագնահատականը

Երրորդ խմբում ուսումնասիրել ենք շահագործող 58 կին «Անձի ուսումնասիրության բազմագործոն մեթոդիկայով», որի արդյունքների վերլուծության հիման վրա շահագործող կանայք /թրաֆիքյորները/ ըստ ադապտացվածության, բնավորության շեշտվածության տեսակների, կյանքի անբարենպաստ իրավիճակների, հակազդման տեսակների մեր կողմից դասակարգվեցին երեք հիմնական խմբի՝ ասթենիկ հատկություններով շահագործողներ՝ 32%, հիպերտիմ հատկություններով շահագործողներ՝ 33%, սենզիտիվ-տագնապային հատկություններով շահագործողներ՝ 35%:

Թրաֆիքյորների ընտանիքի նկարները հիմնականում ներկայանում են առանց հոր կերպարի□Նկարների 98%-ի մոտ նկատվում է սառնություն, տագնապայնություն, լարված ներընտանեկան, ոչ ջերմ հարաբերություններ, ուժեղ արտահայտված բացասական հույզեր, օտարվածություն□Թրաֆիքյորների «Ինքնանկար» մեթոդիկայի համաձայն նրանք ակտիվ են, էներգիայով լի, ունեն հաղորդակցական խնդիրներ, որը վեր է ածվում ագրեսիվության և իմպուլսիվության□ Ըստ մեթոդիկայի արդյունքների 94%-ին բնորոշ է ցածր ինքնագնահատական, ոչ ադեկվատ հավակնությունների մակարդակ, սոցիալական ոչ ադեկվատության զգացում□

Երկրորդ գլխի **«Հետազոտության արդյունքների համահարաբերակցային վերլուծությունը»** ենթագլխում կատարված հետազոտության օրինաչափությունները դուրս բերելու նպատակով կիրառվել է համահարաբերակցային վերլուծություն «Անձի ուսումնասիրության բազմագործոն հարցարանի» /թրաֆիքյոր օղակ/ և «Վիկտիմ վարքի հանդեպ հակվածության ախտորոշման» /զոհ/ մեթոդիկաների միջև□

Հետազոտված կին-դատապարտյալներին /թրաֆիքյոր օղակին/ հնարավոր եղավ դասակարգել ըստ պրոֆիլների տեսակների՝ համապատասխան սանդղակների խմբավորման և պրոֆիլի ամբողջական գնահատման:

Համահարաբերակցային վերլուծության ընթացքում այս երեք տեսակները առանձին-առանձին կապեր են տալիս համապատասխան վիկտիմ վարք ունեցող զոհերի հետ□ Նշված տեսակներին համապատասխանում են՝ ինքնակործանիչ և ինքնավնասող /ակտիվ/ վիկտիմ վարք ունեցող զոհեր, գերակտիվ վիկտիմ վարք ունեցող զոհեր, անքննադատ վիկտիմ վարք ունեցող զոհեր:



Գծապատկեր 4. «Անձի ուսումնասիրության բազմագործոն մեթոդիկայի» և Անդրոնիկովայի «Վիկտիմ վարքի հանդեպ հակվածության ախտորոշման» մեթոդիկայի տվյալների համահարբերակցության միջինացված տվյալները

Ամփոփելով մեր դիտումների, հետազոտությունների, հոգեախտորոշիչ աշխատանքների և դրանց վերլուծությունների արդյունքները, որոնք տրված են աղյուսակների և գծապատկերների տեսքով, մենք եկանք այն եզրակացության, որ կան մի շարք գործոններ, որոնք բացասաբար են ազդում անձի և վարքագծի վրա, դարձնում խոցելի տարբեր բացասական երևույթների նկատմամբ՝ մասնավորապես թրաֆիքինգի զոհ, այնուհետև թրաֆիքյոր դառնալու հանդեպ:

Հաշվի առնելով ավանդական մոտեցումները այդ գործոնները դասակարգել ենք երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ գործոններն են՝ ընտանեկան անբարենպաստ միջավայրը, վիկտիմոլոգիական իրավիճակները, հասարակության մեջ տեղ գտած անբարենպաստ երևույթները, անօրինական արտագաղթը: Սուբյեկտիվ կամ անձնային պատճառներն են՝ հոգեբանական օտարացում, ցածր ինքնագնահատական, ցածր ինքնահարգանք, անպատասխանատվություն սեփական արարքների հետևանքների հանդեպ, հուզական անկայունությունը, կոնֆլիկտների ժամանակ անհավասարակշռվածություն, բնավորության շեշտվածության տիպով հուզական և ցիկլոտոմիկ, մտավոր զարգացման հապաղումներ, ցածր ինտելեկտուալ զարգացվածություն, զոհի դերի ընդունում, զոհի ընդհանուր վիկտիմություն:

Երրորդ՝ «**Թրաֆիքինգի նախազգուշացման և կանխարգելման սոցիալ-հոգեբանական ուղիները»** վերտառությամբ գլուխը կազմված է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Թրաֆիքինգի հոգեբանություն» բուհական դասընթացը որպես մեթոդական հանձնարարական երիտասարդների հետ աշխատանքում»** ենթագլխում ներկայացված է դասընթաց, որի նպատակն է վերապատրաստել տարբեր ոլորտներում աշխատող

մասնագետների՝ գործադրելով բոլոր հնարավոր միջոցները թրաֆիքինգի զոհերին հայտնաբերելու համար, անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաև կոնվենցիայի մասնակից այլ պետությունների և համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ, իսկ զոհին հայտնաբերելու դեպքում՝ վերջինիս տրամադրել կացության թույլտվություն, պաշտպանել զոհերի անձնական կյանքն ու ինքնությունը: Դասընթացն ամբողջությամբ ուղղված էր բուհական կրթություն ստացող ուսանողների իրազեկվածության բարձրացմանը թրաֆիքինգի մասին:

Երկրորդ՝ **«Դեբրիֆինգ /առաջնային հոգեբանավերականգնողական օգնություն զոհերին»** ենթագլխում ներկայացված են խնդիրներ զոհերի հետ աշխատանքը կազմակերպելու նպատակով:

Երրորդ՝ **«Ասերտիվ վարքի թրենինգի /դրական ինքնաընկալման հմտությունների մարզում/ արդյունքների ամփոփումը»** ենթագլխում ներկայացված է ամբողջական թրենինգային ծրագիրը /10 հանդիպում, ընդհանուր 20 ժամ/: Թրենինգի ընդհանուր նպատակն է նվազեցնել զոհերի տագնապայանությունը, անինքնավստահությունը, մշակել սոցիալական հմտություններ նոր կյանք մուտք գործելու և նոր հարաբերություններ ձևավորելու համար:

Տեսական և փորձարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց մեկնաբանումը և ընդհանրացումը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ եզրակացություններին.

1. «Թրաֆիքինգ»-ը (մ.կ.մ.շ.) բազմաբնույթ և բազմաֆունկցիոնալ բռնություն է, մարդու կողմից մարդու շահագործում, որում վճռորոշ դեր ու նշանակություն են ձեռք բերում անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները:

2. Թրաֆիքինգը բնորոշվում է հասարակության ֆիզիկական և հոգեկան առողջությունը կազմալուծող գործառույթներով: Երևույթի պատկերը բրգաձև է, հորիզոնական և ուղղահայաց շարժունությամբ՝ ասոցիալ և վիկտիմ վարքի դերադիրքային մոդելներով:

3. Թրաֆիքինգ-գործունեության շղթայում ներգրավման վճռորոշ գործոններն են սոցիալականացման գործընթացում և անձի հոգեկերտվածքում անձնային առանձնահատուկ և սոցիալ-հոգեբանական յուրատիպ զուգորդությունների առկայությունը:

4. Թրաֆիքինգ-գործունեության համատեքստում կիրարկվում են հոգեբանական պաշտպանական տարաբնույթ մեխանիզմներ, որոնցից ամենաբնորոշը հոգեբանական նույնականացումն է՝ «նույնականացում ագրեսորի հետ» ձևաչափով:

5. Թրաֆիքինգ-գործունեությունը մարդու կողմից մարդու շահագործման ամբողջական պատկերն է, որին նախորդում է վիկտիմ վարքին հակվածություն-թրաֆիքինգին հակվածություն պատճառահետևանքային շղթան:

6. Հուզական դեպրիվացիայի, օտարվածության, մեկուսացվածության, դեզադապտացիայի առկայությունը նպաստավոր գործոններ են վիկտիմ վարք-թրաֆիքինգի հանդեպ հակվածություն պաւոճառահետևանքային շղթայում: Նշված անձնային առանձնահատկությունները նորագոյացությունների տեսքովի հայտ են գալիս տարիքային ճգնաժամային տարբեր փուլերում:

7. Թրաֆիքինգի երևույթն ունի կրկնվելու վտանգ՝ ռեվիկտիմիզացիան, երբ զոհը չհարմարվելով սոցիալական իրավիճակին, չդիմանալով նոր փոփոխություններին կարող է համապատասխան պայմանների առկայության դեպքում կրկին «խաբվել», շահագործվել:

8. Թրաֆիքինգի վաղ կանխարգելումը և հաղթահարումը պահանջում են համալիր միջոցառումներ, թրաֆիքինգի հոգեբանական առանձնահատկությունների մասին գիտելիքների, պատկերացումների լուսաբանում, ծնողներին, մանկավարժներին, դաստիարակներին անհրաժեշտ հոգեբանական գիտելիքներով ապահովում, վաղ ախտորոշում, համապատասխան կանխարգելիչ միջոցառումների կիրառում, զոհերին ռեվիկտիմիզացիայից խուսափելու նպատակով կազմակերպվող դեբրիֆինգի և ասերտիվ վարքի ձևավորման թրենինգների կազմակերպում, համապատասխան հոգեշտկիչ և հոգեկարգավորիչ աշխատանքների իրականացում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հրատարակված հետևյալ աշխատանքներում

1. Մեհրաբյան Մ., Թրաֆիքինգի սոցիալ-հոգեբանական պատճառականության վերլուծությունը (ՀՀ օրինակով); Հոգեբանության իրավունքի խաչմերուկները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 188-198:

2. Մեհրաբյան Մ., Հոգեբանական դեբրիֆինգը որպես թրաֆիքինգի զոհերի հետ աշխատանքի հոգեվերականգնողական և ուսուցման միջոց, Գիտական հոդվածներ /Հոգեբանություն/, Վանաձոր, 2011, էջ 74-85:

3. Մեհրաբյան Մ., Թրաֆիքինգի զոհերի հոգեբանական աջակցությունը և ապագա մանկավարժների կարիերայի զարգացումը, Մանկավարժական կրթության որակի հոգեբանական խնդիրները, Գիտաժողովի նյութեր, 10-12 հուլիսի, Երևան, 2010, էջ145-148:

4. Մեհրաբյան Մ., Психолого-педагогические пути борьби с траффикингом, Մանկավարժական կրթություն, Հայացք դեպի ապագա, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 242-244:

5. Հակոբյան Ն., Մեհրաբյան Մ., Թրաֆիքինգի հանդեպ հակվածության ախտորոշման հոգեբանական վերլուծությունը. Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի հանդես, 2013, էջ 90-97:

МЕГРАБЯН МАРИАМ ВАЧАГАНОВНА

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ ТРАФИКИНГА И ПУТИ РАННЕЙ ПРОФИЛАКТИКИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03"Социальная психология (межличностные отношения, семейная, групповая деятельность)”

Защита диссертации состоится 6-го мая 2014 г., в 12 часов на заседании специализированного совета по психологии 064 ВАК РА по присвоению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул.Тиграна Меца, 17.

Р Е З Ю М Е

Актуальность исследования: Трафикинг, т.е. эксплуатация человека человеком, в последнее время получило широкое распространение во всем мире. Нналичие этого явления и широкие масштабы его распространения обусловлены тяжелыми социально-экономическими условиями, периодическими кризисами, безработицей, в результате безработные и нищие остаются абсолютно беззащитными.

Следовательно, трафикинг характеризуется опасными социальными последствиями: психологической травмой, серьезными нарушениями здоровья, неблагоприятными условиями развития, различными отрицательными проблемами личностного характера.

Этим и объсняется актуальность, своевременность и важность данного всестороннего исследования, с точки зрения выявления причинно-последственных связей, выяснения психологических особенностей данного явления и разработки предупреждающих мер.

Цель исследования: изучить социально-психологические особенности и причинно-последственные связи самого явления “трафикинг”, предопределив ранние пути его предотвращения.

Научная новизна исследования: Впервые в социальной психологии предметом исследования стало экспериментальное изучение формирования причинно-следственных связей “виктимного” поведения, психологические особенности поведенческих проявлений в процессе возникновения и развития трафикинга как социального явления.

Путем экспериментального исследования были изучены возможные причины виктимного поведения жертв трафикинга, что дает возможность разработать и осуществить эффективные социально-психологические предупреждающие /профилактические/ мероприятия. В результате чего, на основе исследования были раскрыт и по-новому представлен социально-психологический подход ко всей динамике развития трафикинга, направленности действий, личностных особенностей участников и виктимологической типологии в целом.

Полученные новые знания дают так же возможность понять, что способствовало принятию роли жертвы, что повлияло на психику, поведение, самосознание и самооценку жертвы, а также на взаимоотношения с окружающими.

Теоретическая значимость исследования: Социально-психологические исследования явления “трафикинг” имеют новое концептуальное значение в социальной психологии. Несмотря на то, что “трафикинг” существовал всегда, но научные исследования в области психологии не проводились. А имеющиеся исследования не способствуют решению основных задач, а именно: какие закономерности лежат в основе поведения жертвы, какими объективными и субъективными причинами обусловлено соответствующее поведение эксплуататора, и, следовательно, не выработаны соответствующие психокоррекционные и профилактические мероприятия.

Теоретическое значение проведенного исследования заключается в том, что выявленные психологические закономерности и специфические особенности обогатили научные представления о “трафикинге”, а также обосновали необходимость дальнейшего всестороннего исследования проблемы.

Практическая значимость исследования: Результаты проведенных исследований дают возможность заинтересованным специалистам оказать профессиональный подход в вопросе искоренения и предупреждения трафикинга и других подобных антиобщественных явлений.

Выявленные психологические закономерности причин возникновения и специфических особенностей трафикинга дают возможность сотрудникам правоохранительных органов в различных организациях, в частности психологам УИУ, получить знания о причинах возникновения, процессе развития и особенностях трафикинга, предупреждать и преодолевать его негативные и патологические проявления, корректировать отрицательные качества, присущие вовлеченным в этот процесс лицам.

В первой главе обобщен исторический обзор, проанализированы различные теоретические концепции, виктимологический аспект явления “трафикинг”.

Во второй главе представлены методики организации исследования, обоснован выбор методов. Представлен экспериментальный анализ социально-психологических причин “трафикинга” как социального явления, а так же обработка результатов экспериментального исследования и корреляционного анализа.

В третьей главе рассмотрены ранние профилактические пути борьбы с траффикингом и тренинговая программа работы с жертвами.

В конце диссертации даётся заключение.

Объем и структура работы. Представленная диссертационная работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Общий объем составляет 164 страниц.

По теме диссертации опубликовано пять научных статей.

MEHRABYAN MARIAM VACHAGAN

Social-psychological causes of trafficking and ways of its early prevention

Thesis for degree of candidate of psychological science in the speciality 19.00.03 Social Psychology (Interpersonal relationship, Family, group activity)

The defense of the dissertation will be held on May the 6th of 2014 at 12 o'clock at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: st. Tigran Mets 17, 0010, Yerevan.

SUMMARY

Research relevence: The phenomenon "trafficking", the exploitation of human beings by human beings is being spread around the world. The existence and large scale of this phenomenon depends on the current social-economical conditions such as: political, social changes, educational innovations, frustrated conditions of society, social alarms and uncertainty, low standard of living, polarized society, non retreating poverty, distorted conditions of the process of regular development of the society and reconstruction of the legal framework in the case of which the vulnerable layers of our society /unemployed, poor/ become unprotected.

The aim of the thesis is to study the social-psychological features of the phenomenon "trafficking" and its causal links and outline the ways of early prevention.

The scientific novelty of the thesis is that the study of the causal links of development of victim behavior, psychological patterns of development process and behavioral manifestation of all parties with experimental way became the subject of the study for the first time in the field of social psychology.

With the help of experimental way the possible causes of the development of victim behavior of trafficking victims were studied which makes possible to develop and implement effective social psychological preventing measurements.

As a result on the basis of the study we discovered and presented new social-psychological approach about the dynamic mobility of the trafficking, direction of the activities, personal features of the participants and victim typology.

The newly attained knowledge makes it possible to understand the cause of the victim's behavior, the influence of victims' mental world, behavior, self-consciousness and self-esteem and the relationship with his/her friends.

Theoretical value: The social-psychological studies of the trafficking phenomenon has new conceptual meaning in the field of social-psychology. Although the trafficking phenomenon existed all the time it hadn't been a scientific study in the field of psychology. The theoretical value of the research conducted is that the observed psychological patterns and the characteristic features enrich the scientific concepts of the trafficking phenomenon, as well as justify the necessity of further study of that issue.

Practical value: The results of the research conducted make it possible to approach professionally those interested in the harmonious development of the society for preventing them from trafficking and other similar antisocial phenomena.

The observed psychological patterns and characteristic features of the cause of trafficking make it possible to equip enforced bodies and psychologists of different institutions, mainly of prisons with certain psychological knowledge, the causes of trafficking, development process as well as warn and overcome the negative and morbid manifestations, prevent and fix many negative qualities which exist in trafficking.

The first chapter of the thesis covers the literature review of the phenomenon "trafficking", the analyses of the different concepts of the phenomenon and the victim aspect.

Second chapter touches upon the experimental analyses of the social-psychological causes of trafficking, the development of results and relative analyses.

The third chapter presents the ways of early prevention of trafficking and the training projects for victims.

Conclusion summarises the thesis.

There are five scientific articles on this thesis.